

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐ ԳՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋԻՆՂԱՅԵՐԵՆՅԱՆ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հոմանիշների միջինհայերենյան ձեռագիր բառարաններում հանդիպում են բառեր, որոնք արձանագրված չեն գրաբարի բառարաններում: Այդ բառերը կարելի է դիտել որպես նորակազմ բառեր: Առանձնացնենք այդպիսիք՝ փորձելով ստուգաբանել և դրանով իսկ պարզել տվյալ հոմանշային շարքում այդ բառերի առկայության անհրաժեշտությունը, միաժամանակ հաստատել նաև դրանց գոյությունը հետագա բառարաններով:

Ջրառարանադրված այդ բառերը, ըստ կազմության, կարելի է ներկայացնել երկու խմբով՝ պարզ և բազադրյալ: Առաջին բառախումբը պարզ բայերն են:

Գրել բառը հիշատակված է Եր. Մեզրեցու բառգրքում «խոչել» բացատրությամբ (Բառ. երեմ., 65): Իբրև նորագյուտ բառ նշում է նաև ՀԱԲ-ը՝ «գործած յանցանքի վրայ մտածելով ափսոսալ» (ՀԱԲ, 1, 548), իսկ ձեռագիր բառարաններում հանդիպում է Հայցել. գննել. այցել. հայտնել. յուզել. խնդրել. քննել. յղկել... Հոմանշային շարքում: Եթե գրել-ը բխեցվի գգիր բառից, ապա ենթադրելի է պրսկ. گزیر [gizir]-ը, որի ծագումն ու բուն իմաստը Հր. Աճառյանը հղում է վճիռ բառին՝ միջին պրսկ. vidiŕ «վճիռ, որոշում, դատարան» (այստեղից էլ՝ վճռել, վճռորոշ, այժմ լայնորեն կիրառվող՝ վճռաբեկ), իսկ վճիռ կայացնելը ենթադրում է քննություն, գննություն, հայց...

Միջին գրական հայերենի բառապաշարը քննելիս մասնավորապես բառակազմությանն անդրադառնալիս, լեզվաբանները գտնում են, որ այդ լեզուն «վկայում է դրաբարին անձանոթ բազմաթիվ պարզ բայեր, որոնց մի մասը նորակազմություն է»¹:

Հետևելով Դուռել. խուղել. թաքչիլ. վերապարել. ճախրել. վերաթոչել. վերաթեւել. սլանալ. թեւածել. աւղազնայ. աւղապարել. ճեպել. փութալ. ստիպել. արագել. ընթանալ. հասանել. դաւղել. սուզանել հոմանշային

¹ Ոստքը վերաբերում է նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ). Հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837, Առձեռն բառարան հայկազեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ). Վենետիկ, 1856, Մ ի Ս Ե Բ ա ս տ ա ց ի. Բառգիրք հայկազեան լեզուի և Բառգիրք ի գրաբարով յաշխարհարան, ուր մեկնին բառք Հայկազեան լեզուի սոսկ այխարհարառ կամ տաճկական բառիւք (այսուհետև՝ ԲՀԼ և ԲԳԱ). Վենետիկ, 1769, Ն. Բ յ ու զ ա ն դ ա ց ի. Նոր բառգիրք հայկազեան լեզուի. Հ. 1-5, Ժնև, 1990 բառարաններին. Համեմատվել են նաև Հ. Բ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). Հ. 1-4. Երևան, 1971, 1973, 1977, 1979, Ե. Բ. Մ Ե Ղ Բ Ե ց ի. Բառգիրք Հայոց (այսուհետև՝ Բառ. երեմ.). Երևան, 1975, Մ. Ք ա ջ ու լ ն ի. Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց. Հ. 2, Վենետիկ, 1893, Հ. Ա վ Ե տ ի ս յ ա ն, Ի. Ղ ա զ ա ր յ ա ն. Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ). Հ. Ա-Բ, Երևան, 1978, 1992, որոնք անհրաժեշտության դեպքում վկայակոչվում են:

² Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Հ. Ա, Երևան, 1972, էջ 250

չարքին, նաև համեմատելով միջին գրական հայերենում արձանագրված նենգել, հարկել, ափել, ճապել, օգտել և այլ բայեր՝ հավանական է թվում դուռ և խուղ արմատներից դուռել և խուղել բայեր կազմելը՝ փակ(վ)ել, ծածկ(վ)ել, թաքնվել իմաստներով³:

Դուռել բայը արձանագրված է դուռել, դուղել, դութել, գուղել տարբերակային ձևերով⁴: խուղել բայը հանդիպում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի՝ 2371-րդ, 1654-րդ, 3937-րդ, 2372-րդ, 5126-րդ ձեռագրերում, ասել է՝ այն ձեռագրերում, որոնցում արձանագրված է դուռել բայով (բացառությամբ 3937-րդ ձեռագրի)⁵:

ՀԱԲ-ը նշում է՝ «Դուռել «թաքչիլ»․ այս անստույգ բառի վրա տե՛ս դուղել» (ՀԱԲ, I, 684), վերջինս էլ բացատրում «թռչիլ․ վերաթևիլ․ օդագնաց լինել» գիտէ միայն ՀՀԲ․ բայց Բառ․ երեմ․ էջ 80 կայ դուռել «թաքչիլ» ձևով մի բառ, որ սրա հետ նոյն պիտի լինի և հետևաբար մեկը կամ միևը վրիպակ» (ՀԱԲ, I, 681):

Բացառելով քաղաքական հետապնդումներից, պետության դատարարական մեքենայի ապօրինություններից խուսափելը (և համանման երևույթներ)՝ թաքնվում են ընդհանրապես (եթե մեղմ են արտահայտվում) վատ արարքների դեպքում, այնպես որ հոմանշային շարքի բայերը իրենց բուն և փոխաբերական իմաստներով լրացնում են միմյանց՝ կազմելով պայմանահետևանքային հարաբերություն⁶ շրջուն կառույց՝ տվյալ դեպքում միայն հակադարձ ընթացքով՝ ... աճապարել, արագել, փութալ, վերաթևել, վերապարել, ... թաքչիլ..., ուրեմն՝ շտապում են նաև թաքնվելու համար, թաքնվելու նպատակով:

Մուրկանալ, մաւրկանալ, մուրանալ, մուկանալ հանդիպում է թշուառանալ․ տառապիլ․ խոհարանալ․ խոհաբանել․ անկածանալ... հոմանշային շարքում: ՆՀԲ և ԱԲ վկայում են մուրիկ, մուրկան բառաձևերը իբրև մուրացկան (ՆՀԲ, II, 301, ԱԲ, 575): Բառ․երեմ․ ունի «Մօրկան-թշուառ» (Բառ․երեմ․, 222): ՄՀԲ նշում է մուրկանություն բառը՝ հղելով մուրացություն բառին (ՄՀԲ, 153): Հետագայում Աշ․ Սուքիասյանն է «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» (այսուհետև՝ ՀՀԲ) արձանագրել Մուրկան-ը «տե՛ս Մուրացկան» նշումով (ՀՀԲ, Երևան, 1967, 475):

Առանձնացվելիք մյուս պարզ բայերը՝ հիքել, քքել, պարենել արձանագրված են Մխ․ Սերաստացու ԲԳԱ-ում:

Բաղադրյալ կազմություններում առանձնանում են ա) ածանցավոր, բ) բարդ ածանցավոր, գ) բարդ բառերը:

ա) Գերայան. կազմված է դեր ածանցից և յան (յօն) արմատից: Մխ․ Աբաստացին գերայօնը հղում է բարձրամիտ բառին (ԲԳԱ, 88): Հետևելով

3 Գ. Զահուկյանի հավաստմամբ Պատրուբանին, Պետրոսոնր և Պոկոռնին խուղ բառն էլ են բխեցնում հ.-ե. *(s)kēu- «ծածկել» (khu-sko) արմատից: Գ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 462:

4 Այսուհետև ըստ անհրաժեշտության տրվում են բառային տարբերակները:

5 Հարկ է նշել, որ XVII–XVIII դդ. ձեռագիր բառարաններում առանձին գլխաբառերով են ներկայացված թաքչիլ, դարանել, դուռել հոմանշային շարքերը (հմտ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր №№ 267, 516, 533, 6762, 566):

6 Տե՛ս ն. Հոմոգրամային և հոմանշային շարքը միջինհայերենյան ձեռագիր բառարաններում. – ՊԲՀ, 2001, № 2, էջ 200–203:

սակայն հոմանշային շարքին՝ Հոյակապ... առլցեալ... հռչակաւոր... կարաւղ... բառացի... ընչաւէտ... անուանի. մեծատուն. գլխաւոր. կատարուն. և եր. Մեղրեցու՝ գերամիտ բառի բացատրութեանը (այն է՝ «փարթամ մտօք». Բառ. երեմ., 64)՝ գերայաւն-ն էլ. թերևս. կարելի է բացատրել իբրև փարթամ հոնքերով, ասել է՝ «երևացող. աչքի ընկնող. երևելի անձ» իմաստներով:

Ուրճանակ (Հոյակապ). թերևս ուճանակ «ածիլ. լցուիլ. մեծանալ. գորանալ» (ՀԱԲ, 4, 608) բայահիմքից և միջին գրական հայերենում կենսունակ -ակ վերջածանցով՝ «գորեղ, հզոր մարդ»: Հոմանիչ է համակալ. մեծատուն, հարուստ բառերին (հարուստ մարգը միշտ գորեղ է. հմմտ. «Փողի տիրոջ խոսքն ամեն տեղ կանցնի». կամ «Փող ունեցար աղա ես, փող չունեցար գյազա (ծառա) ես», և կամ «Փողան սարերն էլ են վախում»): Բառը «հզովդ» նշումով առկա է Ստ. Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարան»-ում (այսուհետև՝ ՀԲԲ) «ուճացած, ամեն բարիքներով լցված» իմաստով (ՀԲԲ, Երևան, 1944, հ. 3, 613):

բ) Երեքհրեան, երեքհրաչեան, երեքսքանչեան, երեքսքանչելեան. բաղադրված են երեք և հուր, հրաչ, սքանչ արմատներից, -եան վերջածանցից:

Լոյս (մի քանի ձեռագրահամարներում՝ Արեգակ) բառով սկսվող հոմանշային շարքն ավարտվում է «որ է աստուած» բացատրութեամբ, ասել է՝ երիցս սքանչելի, երիցս հրաչալի: Նշված բառերով Աստուծուն բնութագրելիս կարելի է վկայել երեքսքանչեան (ՆՀԲ, I, 681. նա ինքն աստուած), երեքլուսեան (ՆՀԲ, I, 680) բառերը, որոնց նմանութեամբ էլ. անշուշտ, կազմվել են այս բառերը: Հավելենք, որ երեքհրեան-ը արձանագրել է Մխ. Սեդստացին «ուճող գերիս հուրս. կամ յորմէ ելանեն երեք բոցք կամ երեքլուսեան. ի հին քերակ.» (ԲՀԼ, 128): Նորայր Բյուզանդացու նշածն էլ թրակացու քերականութիւնում հիշատակվող փաղանունների շարքն է (Ն. Բ յ ո լ զ ա ն դ ա ց ի. նշվ. աշխ., հ. 2, 682): ՆՀԲ ունի եռահրաչ ձևը (ՆՀԲ, I, 661):

Յարաչարել (Շարել). ՆՀԲ-ում վկայված է «Յարաչար...չարահարեալ. կից անընդմեջ» (ՆՀԲ, II, 343): Սա, թերևս, կարելի է դիտել իբրև շարահարել բայի բառային շարահասական տարբերակ: Ինչպես նկատել է Լ. Հովհաննիսյանը, այս տիպի բառային որոշ տարբերակներ ժամանակային նույն հատվածին չեն վերագրվում: Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» (ԱՀԲԲ) արձանագրել է հարաչարել-ը շարահարել նշանակութեամբ (Երևան, 1976, 842):

գ) Գրաբարյան բառարաններում չարձանագրված բարդ բառերի շարքում առկա են հայերեն արմատ + հայերեն արմատ, փոխառյալ բառ + հայերեն արմատ, հայերեն արմատ + փոխառյալ արմատ (//բայահիմք) + բայական վերջավորութիւն կաղապարներով կազմութիւններ:

* Փակագծերում տրվում է այն բառը, որով սկսվում է հոմանշային շարքը: Եթե փակագծերը բացակայում են, ուրեմն այդ բառով էլ սկսվում է հոմանշային շարքը:

7 Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Առաձանի. Երևան, 1960, էջ 248-249.

8 Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Բառային տարբերակներ V գարի գրաբարում. - Հայոց լեզվի պատմության հարցեր. III պրակ, Երևան, 1991, էջ 57:

Ամէնորակ, ամէներանգ նշված են Բազմապատիկ բառով սկսվող հոմանշային շարքում: Կազմված են ամէն(ա) «բոլոր» և համապատասխանաբար որակ, երանդ արմատներից՝ ամեն որակի, ամեն գույնի (բազմագույն) նշանակութուններով, որոնցով հավաստվում է տվյալ բառերի գոյությունը՝ «բազմազան, բազում, բազմապիսի» իմաստներն արտահայտող Բազմապատիկ-ի հոմանշային շարքում:

Ամէնորակ-ը արձանագրել է նաև Մխ. Սեբաստացին «գունզգուն» նշանակությամբ (ԲԳԱ, 14), ասել է՝ որակը հանգեցնելով միայն գույնին:

Դաւադէպ, դավադէտ արձանագրված են Զանխուլ. անյայտ. առանց գիտելոյ... գարանամուտ. սքողեալ. խփեալ. ընդ գրուանաւ. ընդ պատրուակաւ. ընդ վարադուրաւ... հոմանշային շարքում: Բառերը բաղադրված են դաւ «խարդախություն, դարանակալություն, սպանություն» և դէպ «պատահմունք, դիպված» ու դէտ «դիտող, պահապան» արմատներով: Երկու բացատրություններն էլ ընդունելի են, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ՀԱԲ-ը նշված արմատների բառահոգվածներում վկայում է դիւրադէպ, դիւրադէտ բայերը (ՀԱԲ, 1, 660, 661): Ասկայն ելնելով հոմանշային շարքից՝ ավելի հավանական է թվում «դաւը դիտող» բացատրությունը, այսինքն՝ «դարանամուտ, թաքնված»:

Դիւխիթ, դիւխտ, դիւխիթ, դըլդիթ, դ(ը)լիւն, դիւխին, դըլիւն, դիւխիւն. այս բառով սկսվող հոմանշային շարքն է՝ ...դժուարին. տաժանելի. անյանգուրժելի. վտանգաւոր. աղետաւոր. տարակուսանք. սխրալի. ահադին. սոսկալի: Վկայված են Եր. Մեղրեցու, Մխ. Սեբաստացու բառգրքերում «դժուարին» բացատրությամբ (Բառ. երեմ., 80, ԲԳԱ, 109): Բառային տարբերակների բազմազանութունից առավել ընդունելի է թվում դիւխիթ-ը հետևյալ պատճառաբանություն-բացատրությամբ: Բառը կարելի է մեկնել դուլ «դադար, հանգիստ» (ՀԱԲ, 1, 682), որից՝ դղալ կամ դլալ (սրանով կարելի է հիմնավորել բառի լ/ղ/խ բաղաձայնական փոփոխություններով տարբերակները), և խայթ (խայթոց. ՀԱԲ, 2, 325. վերջինիս խիթ ձայնդարձային տարբերակով) արմատներով բաղադրված՝ հանդիստը խաթարված, վտանգված նշանակությամբ:

Դիւխիթ-ը կարելի է բացատրել նաև իբրև պրսկ.] > [del] «սիրտ» և արդեն հիշատակված խայթ արմատներից կազմված՝ սիրտը խոցված, սիրտը ցավող, ասել է՝ հանդիստը կորցրած: Միաժամանակ հարկ է նշել, որ բառի նման բացատրության դեպքում լ/ղ/խ անցումը բառային տարբերակներում մնում է անորոշ:

Այդուհանդերձ երկու դեպքում էլ՝ և՛ հանգիստը վտանգված, խաթարված, և՛ սիրտը խոցված կամ ցավող հոգեվիճակները դժվարին, տաժանելի են, ինչ-որ տեղ նաև վտանգավոր:

Զառբերան. արձանագրված է Հոյակապ բառով սկսվող հոմանշային շարքում: Կազմված է պրսկ.] > [zar] «ոսկի» և հայերեն բերան բառերից՝ ոսկի բերան ունեցող, այսինքն՝ պերճախոս, ճարտարախոս: Նույն նշանակությամբ, սակայն հայկական արմատներով է բաղադրված ոսկեբերան բառը՝ ՆՀԲ-ում, ՀԼՀԲ-ում և ԱՀԲԲ-ում:

Կոտզանալ. հոմանշային շարքն է՝ Այտուցեալ. փքացեալ. ամբարշտեալ... ամբարձեալ... կոկոզանալ... բարձրավզանալ...: Կազմված է գլուխ

բառին հոմանիշ բարբառային կոտ (ՀՀՀԲ, 141) արմատից և իրանյան *zadan* «խփել, հարվածել» բայի *ZAN* հիմքից. որը հայոց բարբառներում առկա է զանեւ ձևով: Ինչպես իրավացիորեն նշում է Լ. Հովհաննիսյանը. *ZAN*-ը իմաստով նույնական է հար-ին⁹: Իսկ արդի հայերենի բացատրական բառարանները զանեւ-ը հղում են զարկել բային. որի բազում իմաստներից մեկն էլ վարսել-ն է՝ «ուժով գետին խրել անցկացնել. ցցել»¹⁰: Նույն նշանակությամբ՝ «հարվածելով խրել վարսել», ՄՀԲ ունի զարնել և զարկել (ՄՀԲ, Ա, 211, 212), իսկ ՆՀԲ հարկանել-ը՝ «մխել, խթել, հարստել» նշանակություներով (ՆՀԲ, 2, 63) (հարստել. այն է՝ վարսել): Կարելի է ենթադրել հայերենի միջին շրջանում բայի «ցցել, տնկել» իմաստը. ուրեմն և կոտզանալ՝ «գլուխը ցցել, տնկել»՝ չմատ. քիթը ցցել, տնկել՝ «գոռոզանալ ամբարտավանալ, փքվել»¹¹: Զանեւ բայի փոխարեն զանալ-ի առկայությունն էլ կարելի է բացատրել հոմանշային շարքում նախորդող և հաջորդող կոկոզանալ, բարձրավզանալ բայերի աղղցություններով:

Համակալ. համ «բոլորը, ամբողջը» (ՀԱԲ, 3, 17) և կալ «բռնելու գործողություն», որից էլ՝ կալնուլ «բռնել, տիրել» (ՀԱԲ, 2, 483), արմատներից. ուրեմն և՛ «բոլորին, ամբողջը տիրող» նշանակությամբ, ասել է՝ դորեզ, ամենակարող: Նույն բացատրությամբ բառը հոմանիշ է հարուստ, կարաւզ, ընչաւէտ, բառացի, մեծատուն բառերին:

Համբակ բառով սկսվող հոմանշային շարքում հիշատակվող մանկակերպ, մանկակերտ, մանգակերտ, մանայկերտ, մանակերտ և մանկտիս, մանկատիս, մանգատիս, մանգտիս, մանգտի բառերի առաջին բաղադրիչը մանուկ-ն է՝ Առաջին բառախմբում բառերի երկրորդ բաղադրիչներն են համապատասխանաբար կերպ-ը, ասել է՝ մանկան նման, մանկատիպ, և կերտ-ը՝ մանկան նման կերտված: Մանկակերտ-ի՝ Մխ. Սեբաստացու բացատրությունն է՝ «տղէ շինած, տղի գործիք» (ԲԳԱ, 251): Հավանական է թվում մանկակերպ-ը, ի հավաստումն որի հարկ է հավելել ՆՀԲ-ում վկայված մանկատիպ-ը (ՆՀԲ, 2, 205)՝ «հղվգ.» նշումով արձանագրված նաև ՀՀՀԲ-ում մանկատի գլխաբառով հոմանշային շարքում (ՀՀՀԲ, 437). այդ բառարանում հոմանիշ են դիտված տիսլ-ն ու կերպ-ը (ՀՀՀԲ, 625):

Մյուս բառախմբի բառերում երկրորդ բաղադրիչն է տի(ս) «տարիք, հասակ», այն է՝ մանկահասակ, որն առկա է ՀՀՀԲ-ում: Մանկատի բառաձևը «դեռահաս, դեռատի» իմաստով վկայված է միայն ԺՀԼԲԲ-ում (ԺՀԼԲԲ, 2, 476):

Մանուկ բառով կազմված մեկ այլ բառ է արձանագրված Պոոնիկ-ով սկսվող հոմանշային շարքում՝ մանկադիտիք, մակադիտիք, մակադիտիլ, մանկադիտել, մանկադիտեալ: Բառերի երկրորդ բաղադրիչն է դէտ «դիտուն, դիտակ» (ՀԱԲ, 1, 551), այնուհետև՝ միջին գրական հայերենում թեև

9 Լ. Հովհաննիսյան. *V* դարից վկայված մի քանի բառերի քննություն – ՊԲՀ, 1991, № 2, էջ 148:

10 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԼԲԲ). հ. 2, Երևան, 1972, էջ 16 և հ. 4, 1980, էջ 383:

11 Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան. Երևան, 1975, էջ 599:

Հագվադեպ, սակայն գործուն -իք հոգնակերտը¹² կամ -եալ վերջածանցը, այն է՝ «մանկան գիտակ, մանկամուլ, մանկատոբիփ»:

Յաստիս բառը հանդիպում է Համբակ. կացի. պարմանի. մանկակերպ (//կերտ). մանկատիս. արբուն. մանկուլթիւն. հասակ... հոմանշային շարքում: Եր. Մեզրեցու բառգրքում նշվում է իբրև «տիք կատարեալ» (Բառ. երեմ., 225): Բաղադրված է յաս (ըստ ՆՀԲ՝ «արմատ հասանելոյ, որպէս հասանելն, հասունանալն» (ՆՀԲ, 2, 49) և տի(ս) «տարիք, հասակ» արմատներով՝ «հասունանալու տարիք, հասակ» իմաստով: Հոմանշային շարքին հետևելով և դրանից բխեցնելով՝ կարելի է ենթադրել, որ Եր. Մեզրեցու ապրած ժամանակաշրջանում կատարյալ է դիտվել արբունքի հասած տարիքը:

Ուշպարակի, ուշպատակի, ուշնապատակի, ուշպատկի, ուշնպատակի. արձանագրված է Հանճար. մակացուլթիւն. տրամախոհուլթիւն. տեսուն. կարծունակցուլթիւն... հոմանշային շարքում:

Ուշպարակի ձևի համար ենթադրելի է միջին պրսկ. *uspurikih*-ը «կատարելութուն, ամբողջականութուն» (*uspur* «լիքը, կատարյալ, լրիվ», *surrik* «կատարյալ, ամբողջական, լիքը»)¹³:

Բառն ուշպատակի ձևով դրի առնողը, թերևս, նկատի է ունեցել բառի բաղադրյալ կազմութունը՝ ուշ «միտք, խելք» և սլատար «լի, լեցուն» արմատները (ՀԱԲ, 4, 37)՝ պահպանելով բառավերջին՝ միջին պարսկական հնչողութունը:

Հավանական կարելի է համարել և բառի հետևյալ բաղադրյալ կազմութունը՝ դարձյալ ուշ արմատից և պարարակ-ից (ըստ ՆՀԲ՝ «սնուցեալ, պարարտեալ, պարարտ, դէր»), այն է՝ «մտքով սնուցեալ, պարարտեալ»:

Այդուհանդերձ երկու դեպքում էլ հիմք ձևերն իրանական են:

Եվ այսպես Գ. Զահուկյանի հավաստումով «... հին հայերենի շրջանում տարածում են գտնում բառակազմության ... մի շարք նոր երևույթներ»¹⁴: Վերը նշված բառերը հաստատում են այդ երևույթների իրողությունը միջին հայերենում, որը, ինչպես հայտնի է, առանձնանում է նորակազմ բառերի առատությունը:

НОВОБРАЗОВАНИЯ В СРЕДНЕАРМЯНСКИХ РУКОПИСНЫХ СЛОВАРЯХ СИНОНИМОВ

НАЗИК ОГАНЕСЯН

Резюме

В среднеармянских рукописных словарях синонимов встречаются слова, словообразование которых не чуждо грабару, но они не зафиксированы в сло-

12 Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության. հ. Ա, Երևան, 1972, էջ 36-37:

13 Գ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. Պահլավերեն-հայերեն բառարան. Երևան, 1994, էջ 54:

14 Գ. Զ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 362:

варях древнеармянского языка. Эти слова можно рассматривать как новообразования. Делается попытка этимологизации выделенных слов, проясняя тем самым их наличие в синонимичных рядах, одновременно подтверждая их существование последующими словарями.

NEOLOGISMS IN THE MIDDLE ARMENIAN MANUSCRIPT DICTIONARIES OF SYNONYMS

NAZIK HOVHANNISYAN

S u m m a r y

In the Middle Armenian manuscript dictionaries of synonyms we find words, the wordbuilding of which isn't strange to Grabar, but they weren't fixed in the dictionaries of Grabar. These words can be observed possibly as neologisms. We make an attempt to etymologize these words, clearing up thereby their presence in the synonymous rows, and at the same time confirming their existence in the posterior dictionaries.